

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սօցիալական էվօլյուցիան սահմանադրական երկրներում.—բանուռական գործադուլ եւ Կուրիէի կասաւստճը Ֆրանսիայում.—Պրոլետարիատի օլսին նոր Բիլլ Անգլիայում.—Թիւրքիայի շարժումների մասին մի բանի դիտարկումներ:

Սահմանադրական-ժողովրդավարական իրաւակարգը անհրաժեշտ հիմք է յետագայ հասարակական-տնտեսական զարգացման համար: Եւ այն բոլոր երկրներում, որոնց մէջ քաղաքացիական և քաղաքական ազատութիւնները ամրանալով դառնել են արդէն բնակիչների երկրորդ բնոյթը—ճանապարհը սոցիալիզմի յաղթանակի համար կարող է ապահոված համարուել. աշխատանքի ներկայացուցչութիւնը օրէջօր կազմակերպուելով, անընդհատ բարձրացնելով իր գիտակցութիւնը, քայլ առ քայլ դիրքեր գրաւելով կապիտալի դժուրութեան վրայ յենած դասակարգերից՝ վերջ ի վերջոյ այնքան փոփոխած է լինելու հասարակական խաւերի յարաբերութիւնները, որ յեղափոխութիւնը նմանուելու է մի բնական ակտի, ինչպէս ծննդաբերութիւնն է: Սաղմը մօր արգանդում պէտք է դանդաղ և կանոնաւոր փոփոխութիւնների ենթարկուի, զարգանայ, հասունանայ, որ երկունքը բնական յեղափոխութիւն ճանաչուի. արտակարգ միջոցներով առաջացնելով, վաղաժամ ծնունդ՝ ստանում ենք վիժում, որ մահացու է ոչ միայն անկատար մանուկի, այլ և յաճախ մօր համար: Այս բերած օրինակի մէջ շատ լաւ կարելի է տեսնել էվօլյուցիայի և բիվօլյուցիայի յարաբերութիւնը և կապը... Հասարակական կարգերի ներքին էվօլյուցիան բաւական առաջ է գնացել եւրոպական բոլոր սահմանադրական երկրներում, սակայն դեռ չի հասել սոցիալական յեղափոխութեան վերջին ակտի հասունութեան: Աշխատանքի և կապիտալի յարաբերութիւնների ներկայ վիճակը սահմանադրական երկրում լաւ լուսաբանում են հիւսիս-արեւելեան Ֆրանսիայում տեղի ունեցած վերջին դէպքերը: Կուրիէի շարժումը ածխահորերում պայթիւնի զոհ գնացին հազարից աւելի բանուորներ և դրանից յետոյ նոյն շրջանում (Պադէ-

Կալէ) 100 հազար բանուորներ գործադուլ յայտարարեցին: Հարց է ծագում, արդեօք հանքատէրերը նախօրօք ձեռք էին առել ըրոր այն նախադգուլութիւնները, որ բանուորների կեանքը չենթարկուեն այդպիսի վտանգների. անշուշտ դատաստանական քննութիւնը կը պարզի կապիտալիստների յանցապարտութեան աստիճանը, և նրանք ստիպուած կը լինեն հատուցում տւել զրկուածներին: Իսկ գործադուլը աւելի յարաճուն կռուի մի արտայայտութիւն է նա ընդհատումներով միշտ շարունակուելու է, քանի տեւելու է աշխատանքի և կապիտալի մաքառումը: Բանուորները դիտակցօրէն կազմակերպուած համերաշխութեամբ դնում են իրանց աշխատանքի դրութիւնը բարուրեցնելու որոշ պահանջներ. կառավարութեան դերը այդ դէպքում սահմանափակուած է միայն արտաքին խաղաղութիւնը և հանգստութիւնը պահպանելու մէջ, թողնելով որ երկու կողմերը իրանց վէճը լուծեն խաղաղ կոմպրոմիսների միջոցով: Եւ ներքին գործերի միևիստ արմատական-սոցիալիստ Կլեմանսօն իմացաւ ժամանակի պահանջներին համապատասխան տակտով վերաբերուել գործադուլին, յարգելով աշխատաւոր դասակարգի կատարեալ իրաւունքը՝ ազատօրէն խաղաղ ճանապարհով պաշտպանելու իր իրաւունքները: Զօրքը, պոլիցիան հեռացրուած էին և պահուած առանձին տեղերում, որովհետեւ գործադուլ անողները բռնութիւնների դիմելու ոչ մի տրամադրութիւն չէին ցոյց տալիս: Եւ արհեստակցական ուժեւ կազմակերպութիւնը երեւան էր հանում իր ամբողջ դիմացկիւնութիւնը այդ անգէն, կուլտուրական միջոցներով կռիւ մղելու մէջ: Բանուորականութեան աճող ոյժը ստիպում է քայլաուքայլ զիջումներ անել նրա օգտին:

Նշանաւոր է Կուրբիերի կատաստրոֆում մի մանրամասնութիւն. երբ աղէտի լուրը հասաւ Գերմանիա, Վեստֆալիայից բանուորները խմբեր շտապեցին դժբաղդութեան վայրը փրկելու աշխատաւոր ֆրանսիացի եղբայրներին. այդ բարձր մարդասիրական զգացմունքը Գերմանիայի բանուորների կողմից խոր տպաւորութիւն է թողել ամբողջ ֆրանսիայում, որ նացիօլիստական բեմանշի գաղափարը տարեցտարի մարում է՝ չնայած Դէրուլէդների հայրենասիրական տաք ճառերին...

Բանուորների կեանքն ու առողջութիւնը ապահովող օրինագծով է սկսում իր գործունէութիւնը և անգլիական նոր կառավարութիւնը: Օրինագիծը արդէն առաջին անգամ կարդացուել էր պալամենտում:

Լիբերալ միևիստութեան բիլլից հանուեց այն կէտը, որով տրէդ-իւնիօնիստների վրայ մասնակի պատասխանատուութիւն

էր դնուում նրա առանձին անդամների արարքների համար. նա համակերպուեց բանուորական պատգամաւոր Հիդառնի բիւլլին, որով բանուորական միութիւնները պատասխանատու չեն ճանաչուում այն ֆլամանների համար, որ կըրում են գործատէրերը գործադուլների շնորհիւ: Երբ բիլլի հակառակորդները ակնարկեցին այն բանի վրայ որ լորդերի ժողովը միենոյն է կը մերժի օրինագիծը, Կէյր-Հարդին հետեւալ խօսքերով պատասխանեց. «Եթէ բիլլը կը մերժուի համայնքների պալատից այն ժամանակ յարատեւ ընդհարում կը ծագի ինչպէս պալատում, այնպէս և երկրում: Կառավարական կուսակցութեան և օպոզիցիայի անդամները լաւ գիտին փորձով թէ ինչ կարող են անել կազմակերպուած բանուորները, երբ նրանք լրջօրէն մի բան իրանց ձեռքը վերցնեն, այդ պատճառով երեւի չեն ուզենալ կրկնելու այդ փորձը: Ինչ վերաբերում է լորդերի պալատին—այդ թողէք մեզ գիտնալ. նա ով ընդհարման մէջ կը մտնի բանուորների հետ մեզ զբաղեցնող հարցի առիթով՝ ամբողջ կեանքի ընթացքում կը զղջայ: Եւ Հիդառնի բիլլը, ինչպէս յայտնի է լրագրներից, անցաւ ձայների ահագին մեծամասնութեամբ:

Դառնանք սահմանադրական երկրներից բռնակալական երկրներին, ուր հարցերը պտտւում են դեռ մարդկային ամենատարրական իրաւունքների անապահովութեան շուրջը: Այդպիսի երկրների մէջ վատթարագոյնն է, իհարկէ, Թիւրքիան: Նրա կուլտուրական սակաւաթիւ տարրերի ամբողջ դժբաղդութիւնը այն է որ ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւնը 90%₀ գտնուում է մտաւոր-տնտեսական զարգացման այնպիսի դրութեան մէջ որ ներկայումս դեռ չի կարող արտադրել հակակառավարական ընդդիմադիր խոշոր ոյժ, ուստի ներքին յեղափոխութիւնը այնտեղ զանազան խմբակների դաւադրական փորձերից դէնը չի անցնում: Այդ դաւադրական խիզախ փորձերով նոյնքան այժմ անյուսալի է աջողութիւնը, որքան նման փորձերը ապարդիւն անցան 50—60 տարի առաջ Ռուսաստանում: Թիւրքիայի այն գաւառներում, ուր մահմեդական տարրը գերիշխող է, ուր թուրք և քիւրդ ովկիանոսում ցիր ու ցան օազիսների նման ընկած են պարիաքրիստոնեանների ազգաբնակչական կղզիներ, յոյս դնել մօտալուտ յեղափոխութեան վրայ նշանակում է չճանաչել իրականութիւնը: Թիւրքիայից ազատուեցան դրսի օգնութեամբ այն երկրները, որոնք համեմատաբար միաձոյլ ցեղական կազմ ունէին. Ռումանիա, Սերբիա, Գունաստան, Բուլղարիա. մնաց Մակեդոնիան, որի մէջ թրքական բեժիմի տակ ճնշուած զա-

նազան ցեղերը այժմ, թողած ընդհանուր թշնամուն, կատաղի կռիւ են մղում իրար դէմ նացիօնալիստական հողի վրայ: Նացիօնալիստական ձգտումները սկսել են արթնանալ նաև Հայաստանում ապրող թուրք ու քուրդ տարրերի մէջ, և այդպիսով աւելի ևս կնճռոտ է դառնում առանց այն էլ գորդեան հանգոյցից աւելի դժուար լուծելի հայկական հարցը: Դաւադրական յեղափոխութեան խիզախ տակտիկան, ինչպէս ցոյց տուեց 25 տարուայ անցեալը, աւելի ևս վատթարացնում է այդ դժուրութեամբ ապրող հայերի կացութիւնը՝ ամբողջ գաւառներ դադարկւում են հալութիւնից, հայ տարրը իրրև ցեղական-տնտեսական ոյժ կորցնում է իր նշանակութիւնը, հայերի բնաջնջումը դառնում է թիւրք բէժիմի ներքին ծրագիր: Պոլսում սուլթանին սպանելու անաջող փորձից յետոյ այժմ նորից սկսել են կատաղի ճնշումներ հայերի դիմին: «Ամբողջ երկրում, ասում է (Рыс. Вѣд. № 79) ինչպէս գաւառներում, նոյնպէս և Պոլսում նորոգութեցան հալածանքները, ճնշումները, որոնք յիշեցնում են իննսունական թուականների վատթարագոյն տարիները»: Ասին օր լրագրներում տպուած փաստերը նոյնն են ասում: Դրա դիմաց քաղաքակիրթ պետութիւններից ամենահանրապետականը — Ամ. Միաց. Նահ. յայտնում են թէ ոչինչ չեն կարող անել այդ «դժբախտ էակների համար»: Խնդրի այդ գերմարդկային դժուարութիւնը պահանջում է գործելու խորազննին, շրջահայեաց և հեռատես տակտիկա, որ լոկ բուռն զգացմունքի և խիզախութեան վրայ չպէտք է յենուած լինի... Այդ մասին մենք կը խօսենք այլ անգամ:

Լ. Ս.

28 Մարտի.

ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԵՔԻ ՔՐՈՆԻԿ:

— Եգիպտահայեր. Պողոս փաշա Նուբարի նուիրատուութեամբ շինուելիք նոր վարժարանի (տես «Մուրճ» 1905 թ. №) հիմնարկէքը Կահիրէյում մեծ հանդիսաւորութեամբ կատարուել է մարտի 4-ին հոգեւորական և աշխարհական հայ մեծամեծների և երկու սեռի բազմութեան ներկայութեամբ. Եգիպտոսի հանրային կրթութեան նախարար Եագուպ Արթին փաշան ևս ներկայ է գտնուել:

Իր ճառի մէջ Նուբար փաշան ասել է ի միջի այլոց հետեւալը.